«ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ»
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՀԱՊՁԲ-2021/16-3-ԵՊԲՀ/3»

ք. Երևան << >> << >> 2021թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Ա. Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<Կուրացիո>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրենի կողմից լիազորված անձ՝ Կ.Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3666900 (երեք միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը ապրանքների մատակարարումը իրականացնում է միանվագ կամ փուլային ըստ Գնորդի ներկայացված պահանջի:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը

սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Գնորդի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ	«Կուրացիո» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Հասցե՝ ք.Երևան Սարյան 16/30
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
հ/հ 11500166513800	հ/հ 20512 2202158 1001
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 02585487
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	էլեկտրոնային հասցե՝ curatio.llc@gmail.com
	Տնօրենի կողմից լիազորված անձ՝ Կ.Սահակյան
_____	---
(ստորագրությունը)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.03.26 15:01:41 AMT

Digitally signed by SAHAKYAN KORYUN 2410750294
Date: 2021.03.25 10:59:47 GMT+04:00

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
N «ԳՀԱՊՁԲ-2021/16-3-ԵՊԲՀ/3» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ֆիրմային անվանում, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									Հասցեն*	ենթակա քանակը	Ժամկետը***
6	33141211	Տրախեոստոմիկ փողի հավաքածու մանժետով, վերմանժետային տարածության արտածծման հնարավորությամբ, N 7,5	Տրախեոստոմիկ փողի հավաքածու մանժետով, վերմանժետային տարածության արտածծման հնարավորությամբ, N 7,5 PORTEX Smiths Medical	Տրախեստոմիկ փողի հավաքածու մանժետով, վերմանժետային տարածության արտածծման հնարավորությամբ: Չափսը՝ 7,5Fr: Ունի 2 փոփոխվող ներքին կանյուլաներ: Մանժետը փափուկ, ցածր ճնշման: Խողովակի թեքության անկյունը անատոմիական՝ 105 աստիճան: Մարմնի ջերմաստիճանում դառնում է ավելի փափուկ և պլաստիկ՝ փոխելով ձևը հիվանդի անատոմիական առանձնահատկություններին համապատասխան: Ֆորմատ-հատ:	հատ	21500	645000	30	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	30	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում
7	33141211	Տրախեոստոմիկ փողի հավաքածու մանժետով, վերմանժետային տարածության արտածծման	Տրախեոստոմիկ փողի հավաքածու մանժետով, վերմանժետային տարածությ	Տրախեստոմիկ փողի հավաքածու մանժետով, վերմանժետային տարածության արտածծման հնարավորությամբ: Չափսը՝ 8Fr: Ունի 2 փոփոխվող ներքին կանյուլաներ: Մանժետը փափուկ, ցածր ճնշման:	հատ	21500	430000	20	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրա*	20	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ

		հնարավորությամբ, N8	ան արտածծման հնարավորությամբ, N8 PORTEX Smiths Medical	Խողովակի թեքության անկյունը անատոմիական՝ 105 աստիճան: Մարմնի ջերմաստիճանում դառնում է ավելի փափուկ և պլաստիկ՝ փոխելով ձևը հիվանդի անատոմիական առանձնահատկություններին համապատասխան: Ֆորմատ-հատ:					*ցան 114*		կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
8	33141112	Սպեղանի	Սպեղանի SUPRASORB F Lohmann & Rauscher	Սպեղանի 10սմx12սմ չափսի: Վիրակապ-թաղանթ է պոլիուրետանային, ինքնակպչուն և անջրաթափանց, հակամիկրոբային, “շնչող”: Օգտագործվում է տարբեր վերքերի բուժման, վիրակապերի ֆիքսման համար: Փաթեթավորումը՝ անհատական, ստերիլ: Վիրակապի 5-7օր էֆֆեկտիվ ազդեցություն: Ֆորմատ՝ հատ:	հատ	450	225000	500	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	500	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
38	33141182	Պլևրալ խոռոչի դրենաժ 8Fr՝ ստիլետով, բութ ծայրով	Պլևրալ խոռոչի դրենաժ 8Fr՝ ստիլետով, բութ ծայրով REDAX® Trocar Catheter REDAX S.p.A	Պլևրալ խոռոչի դրենաժ 8Fr ստիլետով, բութ ծայրով: Մետաղական կաթետեր է, որը տեղադրված է թերմոպլաստիկ PVC խողովակի մեջ, ունի ռենտգեն պոզիտիվ երկայնակի երիզ և սմ-ային սանդղակ, ներքին ծածկույթը՝ պոլիուրետանից: Ֆորմատ՝ հատ:	հատ	4000	40000	10	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	10	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրա

											տուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
39	33141182	Պլևրալ խոռոչի դրենաժ 10Fr՝ ստիլետով, բութ ծայրով	Պլևրալ խոռոչի դրենաժ 10Fr՝ ստիլետով, բութ ծայրով REDAX® Trocar Catheter REDAX S.p.A	Պլևրալ խոռոչի դրենաժ 10Fr ստիլետով, բութ ծայրով: Մետաղական կաթետեր է, որը տեղադրված է թերմոպլաստիկ PVC խողովակի մեջ, ունի ռենտգեն պոզիտիվ երկայնակի երիզ և սմ-ային սանդղակ, ներքին ծածկույթը՝ պոլիուրետանից: Ֆորմատ՝ հատ:	հատ	4000	160000	40	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	40	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
40	33141211	Օռոֆարինգիալ օդամուղ N4	Օռոֆարինգիալ օդամուղ N4 PORTEX Smiths Medical	Պատրաստված է հատուկ PVC-ից, սահուն-հարթ մակերեսով, կորացված եզրերով, սանացիան անցքով: Չափսը N4 /11սմ/: Ֆորմատ- հատ:	հատ	500	5000	10	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	10	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝

											20 օրացույցային օրվա ընթացքում
41	33141211	Օռոֆարինգիալ օդամուղ N3	Օռոֆարինգիալ օդամուղ N3 PORTEX Smiths Medical	Պատրաստված է հատուկ PVC-ից, սահուն-հարթ մակերեսով, կորացված եզրերով, սանացիան անցքով: Չափսը N3 /10սմ/: Ֆորմատ- հատ:	հատ	500	5000	10	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	10	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
42	33141211	Ինտուբացիոն ստիլետ 5.0-8.0 փողերի համար	Ինտուբացիոն ստիլետ 5.0-8.0 փողերի համար PORTEX Smiths Medical	Պատրաստված է ճկուն ալյումինային համաձուլվածքից՝ պատված պոլիէթիլենով, նուրբ ատրավմատիկ դիստալ ծայրով: Նախատեսված է ներշնչափողային փողին անհրաժեշտ կոշտություն և ձև տալու համար: Չափսը՝ 335x4.0mm, 5.0-8.0 փողերի համար: Ֆորմատ- հատ:	հատ	2000	20000	10	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	10	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում

63	33141182	Թորակալ դրենաժ 24Fr, առանց ստիլետի	Թորակալ դրենաժ 24Fr, առանց ստիլետի Toracic Catheter REDAX S.p.A	Թորակալ դրենաժ 24Fr չափի, առանց ստիլետի: Պատրաստված է թափանցիկ, թերմոսենսիտիվ, հեմո-և բիոհամատեղելի PVC-ից: Ծայրը բութ է, որի շնորհիվ նվազում է թոքերի վնասման հավանականությունը: Ամբողջ երկարությամբ ունի ռենտգեն պոզիտիվ երիզ և սանտիմետրային գծանշում: Ունի կողմնային ատրավմատիկ անցքեր և ինտեգրացված կոննեկտոր: Ստերիլ, հատային փաթեթավորմամբ, միանգամյա օգտագործման: Չափսը՝ 24Fr, երկարությունը՝ 45սմ, տրամագիծը՝ 8.0մմ:	հատ	2700	40500	15	*ք. Երևան, Արովյան 60 և/կամ Մուրացան 114*	15	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
64	33141182	Թորակալ դրենաժ 28Fr, առանց ստիլետի	Թորակալ դրենաժ 28Fr, առանց ստիլետի Toracic Catheter REDAX S.p.A	Թորակալ դրենաժ 28Fr չափի, առանց ստիլետի: Պատրաստված է թափանցիկ, թերմոսենսիտիվ, հեմո-և բիոհամատեղելի PVC-ից: Ծայրը բութ է, որի շնորհիվ նվազում է թոքերի վնասման հավանականությունը: Ամբողջ երկարությամբ ունի ռենտգեն պոզիտիվ երիզ և սանտիմետրային գծանշում: Ունի կողմնային ատրավմատիկ անցքեր և ինտեգրացված կոննեկտոր: Ստերիլ, հատային փաթեթավորմամբ, միանգամյա օգտագործման: Չափսը՝ 28Fr, երկարությունը՝ 45սմ, տրամագիծը՝ 9.3մմ: Ֆորմատ՝ հատ:	հատ	2700	40500	15	*ք. Երևան, Արովյան 60 և/կամ Մուրացան 114*	15	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
65	33141136	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 14Fr	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով,	Ինտուբացիոն փողի արտածծման կաթետեր /ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 14Fr/,	հատ	550	27500	50	*ք. Երևան, Արովյ*	50	Ապրանքի մատակարարումն իրականաց

			14Fr PORTEX™ Smiths Medical	պատրաստված է լատեքս չպարունակող հարթ, սահուն նյութից, որի շնորհիվ հեշտությամբ անցնում է ներշնչափողային կամ տրախեոստոմիկ փողերի միջոցով: Ունի երկու կողմնային անցքեր և վակուում մատնային հսկիչ, որոնց շնորհիվ նվազում է հյուսվածքների վակուումային վնասման հավանականություն յունը: Չափսը՝ 14Fr, երկարությունը՝ 515մմ: Ֆորմատ՝ հատ:					*ան 60 և/կամ Մուրա ցան 114*		վում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
66	33141136	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 16Fr	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 16Fr PORTEX™ Smiths Medical	Ինտուբացիոն փողի արտածծման կաթետեր /ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 16Fr/, պատրաստված է լատեքս չպարունակող հարթ, սահուն նյութից, որի շնորհիվ հեշտությամբ անցնում է ներշնչափողային կամ տրախեոստոմիկ փողերի միջոցով: Ունի երկու կողմնային անցքեր և վակուում մատնային հսկիչ, որոնց շնորհիվ նվազում է հյուսվածքների վակուումային վնասման հավանականություն յունը: Չափսը՝ 16Fr, երկարությունը՝ 515մմ : Ֆորմատ՝ հատ:	հատ	550	27500	50	*ք. Երևան, Արովյան 60 և/կամ Մուրացան 114*	50	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
67	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 5.0	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 5.0	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, 5.0: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռոտրախեալ ինտուբացիայի համար:	հատ	3700	11100	3	*ք. Երևան, Արովյան 60 և/կամ Մուրացան*	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ

			PORTEX™ Smiths Medical	Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 5.0մմ: Ֆորմատ՝ հատ:					*114*		փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
68	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օոոտրախեալ, N 5.5	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օոոտրախեալ, N 5.5 PORTEX™ Smiths Medical	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օոոտրախեալ, 5.5: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օոոտրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 5.5մմ: Ֆորմատ՝ հատ:	հատ	3700	11100	3	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
69	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օոոտրախեալ, N 6.0	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օոոտրախեալ, N 6.0 PORTEX™ Smiths	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օոոտրախեալ, 6.0: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օոոտրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն	հատ	3700	11100	3	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ

			Medical	ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ: Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 6.0մմ: Ֆորմատ՝ հատ:							Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
73	33141211	Արմիրացված ներշնչափողային օռոտրախեալ խողովակ N 6.5	Արմիրացված ներշնչափողային օռոտրախեալ խողովակ N 6.5 PORTEX™ Smiths Medical	Ներշնչափողային օռո-նազո-տրախեալ արմիրացված փող ցածր ճնշման մանժետով, N 6.5 չափի: Նախատեսված է դիմածնոտային, LOR և նեյրովիրաբուժական վիրահատությունների անեսթեզիայի օռո-նազո-տրախեալ ինտուբացիայի համար: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, արմիրացված չժանգոտող պողպատով: Մանժետը հատուկ գերնուրբ, տանձաձև կառուցվածքի: Փողի կտրվածքը կորացված: Մերֆիի տիպի: Փողի երկայնական սմ-ային սանդղակ: Ստերիլ փաթեթավորում: Չափսը 6.5մմ: Ֆորմատ՝ հատ:	հատ	7200	21600	3	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	3	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
75	33141211	Փակ ակտիվ դրենաժային համակարգ	Փակ ակտիվ դրենաժային համակարգ Bellows drainage system REDAX S.p.A	Փակ ակտիվ դրենաժային համակարգ 18CH/F ՌԵԴՈՆ դրենաժով, միացված 500մլ վակուումային/զսպանակային տարային: Ֆորմատ- հատ:	հատ	3600	36000	10	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	10	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրա

											տուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
93	33141211	Զտիչ շնչառական խողովակի բակտերիովիրուսային	Զտիչ շնչառական խողովակի բակտերիովիրուսային PORTEX Smiths Medical	Բակտերիովիրուսային զտիչ շնչառական կոնտուրի համար: Պատրաստված է թափանցիկ պլաստմասսայից, միացման չափսը 15/15-22, զտիչը բակտերիո-վիրուսային, ֆիլտրացիայի աստիճանը 99.999% -ից ոչ պակաս 24 ժամ ԹԱՇ-ի համար, քաշը 20գ-ից ոչ ավել, հոսքի դիմադրությունը 3.0սմ H2O (60լ/րոպեի դեպքում), մեռյալ տարածությունը ոչ ավել, քան 32 մլ: Միանվագ օգտագործման համար: Ստերիլ է, ապիրոգեն, ոչ տոքսիկ: Ֆորմատ- հատ:	հատ	550	165000	300	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	300	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում
96	33141211	Կոնտուր մեծահասակի	Կոնտուր մեծահասակի PORTEX Smiths Medical	Գոֆրեաձև շնչական խողովակների հավաքածու նախատեսված թոքերի արհեստական շնչառության սարքերի համար: Պատրաստված է թափանցիկ պլաստմասսայից, երկարությունը 72/183սմ/, տրամագիծը 22մմ, միացման չափսը 15/22մմ, ճկուն է, ծալվելուց լուսանցքը չփակվող, ունի բիֆուրկացիոն Y կոննեկտորով միացած երկու խողովակ, անկյունային կոննեկտոր գազերի մոնիտորինգի պորտ, 3լ	հատ	3490	1745000	500	*ք. Երևան, Աբովյան 60 և/կամ Մուրացան 114*	500	Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝

				պահեստային պարկ: Ֆորմատ՝ հատ:							20 օրացույցային օրվա ընթացքում

**Կուրացիո ՍՊԸ-ն հավաստում է, որ.*
1. մատակարարվող ապրանքը կլինի՝
-նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորումով:
-հանձնելու պահին կունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:
2.Ապրանքը թուրքական արտադրության չէ:
3.Բոլոր ներկայացված ապրանքները ունեն CE, ISO-13485 և ISO-9001 հավաստագրեր, որոնց էլեկտրոնային կամ թղթային տարբերակները կներկայացվեն ըստ պահանջի Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ԳՆՈՐԴ
<<Երևանի Միխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան
_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.03.26 15:02:17 AMT

ՎԱՃԱՌՈՂ
«Կուրացիո» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան Սարյան 16/30
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
հ/հ 20512 2202158 1001
ՀՎՀՀ 02585487
էլեկտրոնային հասցե՝ curatio.llc@gmail.com
Տնօրենի կողմից լիազորված անձ՝
Կ.Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by SAHAKYAN KORYUN 2410750294
Date: 2021.03.25 11:02:28 GMT+04:00

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
N «ԳՀԱՊՁԲ-2021/16-3-ԵՊԲՀ/3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
6	33141211	Տրախեոստոմիկ փողի հավաքածու մանժետով, վերմանժետային տարածության արտածծման հնարավորությամբ, N 7,5				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
7	33141211	Տրախեոստոմիկ փողի հավաքածու մանժետով, վերմանժետային տարածության արտածծման հնարավորությամբ, N8				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
8	33141112	Սպեղանի				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

38	33141182	Պլևրալ խոռոչի դրենաժ 8Fr՝ ստիլետով, բութ ծայրով				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
39	33141182	Պլևրալ խոռոչի դրենաժ 10Fr՝ ստիլետով, բութ ծայրով				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
40	33141211	Օռոֆարինգիալ օդամուղ N4				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
41	33141211	Օռոֆարինգիալ օդամուղ N3				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
42	33141211	Ինտուբացիոն ստիլետ 5.0-8.0 փողերի համար				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
63	33141182	Թորակալ դրենաժ 24Fr, առանց ստիլետի				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

64	33141182	Թորակալ դրենաժ 28Fr, առանց ստիլետի				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
65	33141136	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 14Fr				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
66	33141136	Ասպիրացիոն կաթետեր վակուում հսկիչով, 16Fr				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
67	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 5.0				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
68	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 5.5				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
69	33141211	Ներշնչափողային խողովակ հարավ թեքումով մանժետով օռոտրախեալ, N 6.0				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

73	33141211	Արմիրացված ներշնչափողային օռոտրախեալ խողովակ N 6.5				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
75	33141211	Փակ ակտիվ դրենաժային համակարգ				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
93	33141211	Զտիչ շնչառական խողովակի բակտերիովիրուսային				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
96	33141211	Կոնտուր մեծահասակի				100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ մատակարարված ապրանքների քանակի:*

ԳՆՈՐԴ
<<Երևանի Միսիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.03.26 15:02:37 AMT

ՎԱՃԱՌՈՂ
«Կուրացիո» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան Սարյան 16/30
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
հ/հ 20512 2202158 1001
ՀՎՀՀ 02585487
Էլեկտրոնային հասցե՝ curatio.llc@gmail.com
Տնօրենի կողմից լիազորված անձ՝
Կ.Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by SAHAKYAN KORYUN 2410750294
Date: 2021.03.25 11:02:55 GMT+04:00

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
N «ԳՀԱՊՁԲ-2021/16-3-ԵՊԲՀ/3» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
N «ԳՀԱՊՁԲ-2021/16-3-ԵՊԲՀ/3» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն